



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող» տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության 3 մասնակիցների ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին մեկտեղումը հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3

☎ (+ 374 11) 52-33-56
Fax: (+374 11) 52-19-21
E-mail info@armstat.am

ՀՀ ԱՎԾ կայքէջեր՝ <http://www.armstat.am> , <http://www.armstatbank.am>, <http://www.armdevinfo.am>

(հայելային կայքէջ՝ зеркало официального сайта: <http://www.armstat.info>)

© ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2016



Հարգելի ընթերցող, սույնով երախտիքի ամենամեծ խոսքն է հղվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությամբ զբաղվող ողջ բնակչությանը և կազմակերպություններին, ովքեր իրենց մասնակցությամբ և անգնահատելի վերաբերմունքով նպաստեցին անկախության պայմաններում Հայաստանի Հանրապետության առաջին գյուղատնտեսական համատարած հաշվառման կայացմանը:

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովը երախտիքի խոսքեր է հղում նաև Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության վարչապետին, Հայաստանի Հանրապետության նախարարություններին և գերատեսչություններին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպման և անցկացման աշխատանքներին օժանդակելու համար, Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների ղեկավարներին, որոնք պատրաստակամ և ջերմեռանդորեն նպաստեցին գյուղատնտեսական համատարած հաշվառման քարոզարշավը կազակերպելու և իրականացնելու, համայնքների բնակիչներից հաշվարարներ տրամադրելու, ինչպես նաև հաշվառման գործընթացի այլ աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու համար:

Երախտիքի խոսքեր են հղվում նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակիցներին, ինչպես նաև այն միջազգային կազմակերպություններին և երկրների կառավարություններին, որոնք նպաստեցին մեթոդաբանական, կազմակերպական և դրամաշնորհային ֆինանսավորման հարցերի հստակեցմանն ու լուծմանը, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներին գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և հետհաշվառման գործընթացների հնարավորին լայն լուսաբանման համար:

Մտեփան Մնացականյան

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ

Ե Ր Ա Խ Տ Ի Ք Ի Խ Ո Ս Ք

ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովը երախտիքի խոսք է հղում՝

- հանրապետության բնակչությանը, ով իր մասնակցությամբ նպաստեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացմանը,
- ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին, ՀՀ վարչապետին, ՀՀ նախարարություններին և գերատեսչություններին, ՀՀ մարզպետներին՝ ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքներին օժանդակելու համար,
- ՀՀ 866 գյուղական համայնքների, 49 քաղաքային համայնքների և Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարներին*, ովքեր անգնահատելի աշխատանք կատարեցին ԳՀՀ նախապատրաստման, կազմակերպման և անցկացման ընթացքում:
- գիտակրթական և հասարակական կազմակերպությունների բոլոր այն անդամներին և աշխատակիցներին, ովքեր իրենց առաջարկություններով ու դիտողություններով աշխատանքային հանդիպումների ընթացքում տեղի ունեցած քննարկումների ժամանակ նպաստեցին մեթոդաբանական և կազմակերպական որոշ հարցերի լուծմանը,
- զանգվածային լրատվամիջոցներին՝ գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և հետհաշվառման գործընթացների լուսաբանման համար:

Հանձնաժողովն առանձնահատուկ երախտիքի խոսք է հղում օժանդակություն ցուցաբերած պետություններին և միջազգային դոնոր կազմակերպություններին, առանց որոնց ֆինանսական և մեթոդական աջակցության հնարավոր չէր լինի իրականացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական համատարած հաշվառումը, հանձինս՝



ԱՄՆ-ի կառավարությանը



ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությանը

*) Համայնքների քանակը ներկայացված է ըստ 2014թ.-ի հոկտեմբերի դրությամբ:



Ամերիկայի Միացյալ Նահանգների
գյուղողեպարտամենտին



Ավստրիայի կառավարությանը



Ավստրիական զարգացման գործակալությանը



Եվրամիությանը



Համաշխարհային Բանկին



ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության
կազմակերպությանը



Եվրոպական Միության «Աջակցություն
Հայաստանի ազգային վիճակագրական
ծառայությանը» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո
Եվրամիության փորձագետներին



Empowered lives.
Resilient nations.

ՄԱԿ-ի զարգացման ծրագրին



Ագրոբիզնեսի հետազոտությունների և
կրթության միջազգային կենտրոնին